ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
11.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան «01» 04. 2019թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տ. Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Պապիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 11.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.03.2019թ. թիվ 315 –Ն որոշումը և հաշվի առնելով Պայմանագրի 4.1 և 4.1.1 կետերը՝ Կողմերը որոշեցին ներշենքային սանիտարական մաքրման ծառայությունների մատակարարման նպատակով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն կից ներկայացված Հավելված N1-ի:

1.2 Պայմանագրի 4.1 կետի «68400000 (վաթսունութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «51300000 (հիսունմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.3 Պայմանագրի 1 և 2 Հավելվածները խմբագրել նոր բովանդակությամբ համաձայն N 1 և 2 Հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 5 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Աժ աշխատակազմ ք. Երևան, Բաղրամյան պող.19 ՀՎՀՀ 00008519 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011020089 ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տ. Գալստյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Քլիներս» ՍՊԸ Ք.Երևան, Կոմիտաս 36գ, բն78 Ամերիաբանկ ՓԲԸ ՀՎՀՀ 00130286 Հ/Հ 1570018464820100 Տնօրեն Գ. Պապիկյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«11» դեկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի
« 01 » « 04 » 2019 թ. կնքված N1 համաձայնագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	90911220/502	Սանիտարական մաքրման ենթակա է ՀՀ ԱԺ 22654քմ ներշենքային տարածքը, առկա շենք-շինությունները և դրանց անմիջական հարակից տարածքները: Մաքրման ծառայություններն իրականացվում են շաբաթվա բոլոր օրերին, բացի կիրակի օրվանից և տարբեր հերթափոխերով: Տվյալ տարածքի մաքրությունը պետք է իրականացվի ՀՀ ԱԺ–ի սպասարկումն իրականացնող առնվազն 60 աշխատակիցների միջոցով: Ընկերությունը պարտավորվում է նրանց ընդունել աշխատանքի մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող ծառայությունների մատուցման ավարտը՝ ամսեկան դրույքաչափ սահմանելով 105,000 (հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ: *Ծառայության մատուցման ժամկետը* սկիզբը 2019թ. հունվար ամսվա առաջին աշխատանքային օրվան նախորդող օրվանից Ավարտը 31.12.2019թ. *Ծառայության մատուցման ժամերը* 06:00-ից մինչև 18:00 ընկած ժամանակահատվածում: Ծառայությունները մատուցվելու են Կատարող կազմակերպության սարքավորումներով, ինչպես նաև միջոցներով և նյութերով, որոնք պետք է լինեն բարձրորակ գործող անվտանգության նորմերին և ստանդարտներին համապատասխան, որի համար Կատարողը պետք է ներկայացնի համապատասխանության սերտիֆիկատ: Կատարողը պետք է ունենա առնվազն 10 հատ մաքրող և 4 հատ լվացող փոշեկուլ: *Մաքրման ծառայությունների պլանը ներկայացված է Հավելված 1.1-ում*	դրամ	51300000	1	ք. Երևան, Ս. Բաղրամյան պող.19	Պայմանագիրը հանձնվելուց հետո մեջ մտնելու օրվանից՝ մինչև 2019թ.դեկտեմբերի 31-ը

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Աժ աշխատակազմ ք. Երևան, Բաղրամյան պող.19 ՀՎՀՀ 00008519 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011020089 ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տ. Գալստյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Քլիներս» ՍՊԸ Ք.Երևան, Կոմիտաս 36գ, բն78 Ամերիաբանկ ՓԲԸ ՀՎՀՀ 00130286 Հ/Հ 1570018464820100 Տնօրեն Գ. Պապիկյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«11» դեկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԲՄՇՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի
« 01 » « 04 » 2019 թ. կնքված N1 համաձայնագիր

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված միջոցների համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90911220/502	Գրասենյակների մաքրման ծառայություններ	-			17100000	17100000	17100000	34200000	34200000	34200000	51300000	51300000	51300000	**51300000**

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Քլիներս» ՍՊԸ
Ք.Երևան, Կոմիտաս 36գ, բն78
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 00130286
Հ/Հ 1570018464820100
Տնօրեն
Գ. Պապիելյան

/ստորագրություն/
Կ.Տ